ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«_____» ________ 2020 թ.** **N____Ա**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԲԱԴԵՆ-ՎՅՈՒՐՏԵՄԲԵՐԳԻ ԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով`

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանում Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղին (ՀՎՀՀ 02567796) սեփականության իրավունքով պատկանող, Դրոյի փողոցի 22/5 և Դրոյի փողոցի 30 հասցեներում գտնվող շինությունների նկատմամբ սահմանել գույքահարկի արտոնություն` ազատելով 290544 /երկու հարյուր իննսուն հազար հինգ հարյուր քառասունչորս/ դրամի չափով գույքահարկի վճարումից /ապառք` 261061 դրամ, տույժ` 29483 դրամ/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԲԱԴԵՆ-ՎՅՈՒՐՏԵՄԲԵՐԳԻ ԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանում Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի Երկրամասային կազմակերպության մասնաճյուղին սեփականության իրավունքով պատկանող շինությունների 2019 թվականի գույքահարկի գումարը 19.03.2020 թվականի դրությամբ կազմում է 290544 /երկու հարյուր իննսուն հազար հինգ հարյուր քառասունչորս/ դրամ:

Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպությունն իր գործունեությունը Հայաստանում սկսել է դեռևս 1988թ. ավերիչ երկրաշարժից հետո: Այդ ժամանակ դեռևս Խորհրդային Միության Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի, իսկ այնուհետև Հայկական Կարմիր խաչ ընկերության հետ սերտ համագործակցությամբ իրականացրել է մարդասիրական տարբեր նախաձեռնություններ:

Հայաստանում Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղը իրականացնում է մի շարք բարեգործական ծրագրեր, այդ թվում բարեգործական ճաշարան, տնային սպասարկում հաշմանդամ, անօգնական, միայնակ անձանց համար, ինչպես նաև կազմակերպում է այլ տարաբնույթ միջոցառումներ սոցիալապես անապահով խավի համար:

Հատկանշական է այն փաստը, որ կազմակերպությանը գույքահարկի արտոնություն տրամադրելու դեպքում, կավելանա հաշմանդամ, անօգնական և միայնակ անձանց ցուցաբերվող օժանդակությունը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Հայաստանում Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղի կողմից մշտապես իրականացվող բարեգործական գործունեությունը, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Հայաստանում Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի Երկրամասային կազմակերպության մասնաճյուղին գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը` 290544 /երկու հարյուր իննսուն հազար հինգ հարյուր քառասունչորս/ դրամի չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԲԱԴԵՆ-ՎՅՈՒՐՏԵՄԲԵՐԳԻ ԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանում Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի Երկրամասային կազմակերպության մասնաճյուղին սեփականության իրավունքով պատկանող Դրոյի փողոցի 22/5 և Դրոյի փողոցի 30 հասցեներում գտնվող շինությունների 2019 թվականի գույքահարկի գումարը 19.03.2020 թվականի դրությամբ կազմում է 290544 /երկու հարյուր իննսուն հազար հինգ հարյուր քառասունչորս/ դրամ:

Հաշվի առնելով կազմակերպության կողմից հաշմանդամ, անօգնական և միայնակ անձանց ցուցաբերվող օժանդակությունը, նպատակահարմար եմ գտնում Հայաստանում Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպությանը տրամադրել 290544 /երկու հարյուր իննսուն հազար հինգ հարյուր քառասունչորս/ դրամի չափով գույքահարկի արտոնություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 1

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԲԱԴԵՆ-ՎՅՈՒՐՏԵՄԲԵՐԳԻ ԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանում Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղին գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 2

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԲԱԴԵՆ-ՎՅՈՒՐՏԵՄԲԵՐԳԻ ԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանում Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղին գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ